

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# ԿԱՐՈՏԻ ԵՐԳԵՐ

Հ ե դ ի ն ա կ  
ՆՈՒԱՐԴ Ա. ԿԵՕՐԿԻԶԵԱՆ



ՏՊԱՐԱՆ «ՊԱՅՔԱՐ»-Ի

ՊՈՍՏՈՆ

1924

891.99  
4-58

19 NOV 2011

Vartan Asakelian  
Peabody Mass


891.99  
4-58



ՆՈՒԱՐԻ ԺԱՆԻ  
(Տիկ. Նուարդ Կէօրլիզեան)

# ԿԱՐՕՏԻ ԵՐԳԵՐ

ՀԵՂԻՆԱԿ  
ՆՈՒԱՐԴ Ա. ԿԷՕՐԿԻԶԵԱՆ



ՏՊԱՐԱՆ ՊԱՅՔԱՐԻ  
ՊՈՍՏՈՆ

1924

22.05.2013

36269

Զ Օ Ն

Արտահատոք Ամուսնոյն  
ԱՐՄԵՆ Ա. ԿԵՕՐԿԻՉԵՍՆԻ

Իմ ազիզ Արս,

Զկարողացայ գտնել մի առելի բանկագին նուէր ժեզ համար, այս նոր տարւայ առքին, ժան այն՝ որ ես բերում եմ եւ քափում քառաջ, «ԿԱՐՈՍԻ ԵՐԳԵՐ»իս մէջ խոտացրած, հոգւոյս մրմունջները անվերջ, — տասնեակ տարիների երազներիս գրական, անդրանիկ այս փորձը...

Որի սկիզբն ու վերջը միայն ժեզ մօտ է...

Այս բոլորը ծննեցին եւ կը ծննին այն մտքի հանոյքից, թէ սրանք ձօն պիտի լինին աշխարհիս հեռաւոր մի ամենինում ընկած իմ միակ սրտահատորին:

Ու եթէ սրանի երբ եւ իցէ քա հանութեանն արժանանան, ուրեմն ընդունած եւ վայլած կը լինիմ այն բոլոր վարձատրութիւնները՝ որոց արժէքը միայն ես կարող եմ գնահատել. կամ ուրիշ խօսքով նրանք՝ ովքեր աշխատում են միայն իրենց եւ իրենց պատակիցներին բաւարարելու եւ հանելի լինելու համար:

Ուրեմն բող ուրիշները երգեն, պարեն եւ խլացնող աղաղակներով ընդունին այս նոր տարին. բայց դու լոիր եւ լսիր, ես երգում եմ ժեզ համար, եւ ուզում եմ, որ իմ երգերով դիմաւորես դու նոր Տարին...

ՀԵՂԻՆԱԿԻ

0577-71

## I

Գնում էիր...

Միակ եւ վերջին նույրդ որ տուիր ինձ, մի տետրակ էր:

Բոլորովին մաքուր եւ անգիր մի տետրակ:

Դու վախեցե՞լ էիր թէ՞ ափսոսացել սեւացընելու այդ տետրակը — չգիտեմ... բայց ե՞ս...

Ես պիտի դնեմ սիրոս ու հոգիս այս անկենդան քղբերի վրայ.

Եւ մի օր...

Մի օր պիտի փոեմ ոտներիդ տակ քո առաջ...

Զէ՞ որ դու ա'յդ ես ուզում քո այս մաքուր քերքերովիդ...

## II

Քո անհուն հոգիում, քո տիեզերք սրտում մի՞քէ այսպէս սարսափելի դատարկութիւն եւ մեռածութիւն է տիրում...

Կամ մի՞քէ դու այդքան ժատ ես, որ ափսոսացիր մի բառ... եւ միայն մի բառ դնել այս պատաճե՞լ պէս սպիտակ եւ լուռ քղբերի վրայ ... եւ բոյլ տուիր, որ մեռածութիւն բռնեն այս անաղարտ քերքիկները...

Բայց ե՞ս, ես պիտի պատսեմ գերեզմանի պէս լուռ պատաճը տետրիդ, եւ իմ սրտի ամբողջ հարառութիւնը, — հոգուս զեղուն մըրմունջները անվերջ — պիտի տեղամ զարնանալին անձրեւի պէս յորդառատ, եւ բող նրանք ոռոգեն դատարկ ու ամայի սիրոտ ու հոգիդ...

Զէ՞ որ քո անհուն դատարկութեան դէմ ես ունիմ անչափ հարստութիւն, եւ քո ժլատութեան դէմ անվերջ առատանենութիւն...

Յիշո՞ւմ ես ի՞նչ վատ էր տրամադրութիւնը, եւ սառն էր վերաբերմունքդ մեր բաժանման վերջին օրը...

Զգիտեմ ինչո՞ւ, բայց այդ արարքդ ինձնից բաւական արցունիք լսեց...

Առաւոտ վաղ՝ ես կապկառում էի իրերս, երբ դու նոյնպէս, սառն ու անազմուկ՝ բացիր սենեակիս դուռը, նստեցիր երկար ու լուր, առանց անգամ բարեւելու...

Ե՞ս էլ չեի խօսում:

Թու անսովոր սառնութիւնը փակում էր քերան...

Յիշո՞ւմ ես, երբ կառքն արդէն պատրաստ էր, ես մի բան հարցրի, դու երեւի սխալ հասկացար եւ լացացնող կոպութեամբ պատասխանեցիր ինձ:

Նկատողութիւնը որ արի ես ժեզ քո վերաբերմունքի համար, դու նոյնութեամբ վերադրիր ինձ:

Բայց դու չեիր արտասոււմ...

Երբ կայարանումն էինք դու խօսում էիր երբեմն կարծես թէ սիրալիր...

Ինձ առաջարկեցիր մօտենալ քէյասեղանին. ես համաձայնեցի, քէեւ ախորժակ չունէի:

Յիշո՞ւմ ես, դու զբանիցդ մի քուլք հանեցիր, որի վրայ ինչ որ բան էիր գրել, եւ նորից շարունակեցիր գրել...

Փորձեցի կարդալ, բայց դու իբր թէ չիմանալով, ձեռքովդ ծածկեցիր գրածքը:

Երբ ես խնդրեցի, մերժեցիր մի շարաննի ժպիտով:

Ծալեցիր քուլքը եւ բանտարկեցիր ծոցիդ գրպանում:

Ես կոտրեցի անսպասելի կերպով մերժողի պէս...

Որպէս զի այդ բանը դու չնկատէիր, մի քանի անգամ էլ խնդրեցի. ի հարկէ միշտ էլ մերժուեցի...

Այդ վերջին հարւածը չէր, սակայն, որ դու  
տուիր ինձ այդ վերջին օրում:

Երբ երկրորդ զանգը հնչեց, դու շտապե-  
ցիք «քարի երբ» մաղթել ինձ եւ գնացքից ցա-  
ծանալ:

Սառն ժպիտով պարզեցիք ձեռքդ, ինչպէս  
անում են պաշտօնական ծանօթները:

Ես ձեռքդ երկար պահեցի ձեռքիս մէջ...

Զէիր սեղմում ձեռքս...

Ուղիղ նայում էիր աչքերիս:

Վերջապէս դու հեռացար, բաւականանա-  
լով միայն ձեռքի հպումով...

Շոգեկաքսան սուլեց ականջ ծակող սու-  
լոցով, եւ գնացքը շարժւեց սիրտ նմլող աղ-  
մուկով:

Դանդաղութեամբ հեռացաք ինձնից ե՛ւ  
դու, ե՛ւ կայարանը, կարծես մենք բաժանւե-  
ցինք յաւիտենապէս...

Բայց դու ինձ հետ էիր միշտ, իմ աչքերի  
առաջ կանգնած, բն էն խորերդաւոր քորով եւ  
սառն բաժանումով...

Մայր իմ.  
Ես հիւանդ, մէն-մինակ ընկած եմ խուցի  
մէջ...

Ի՞նչ սարսափելի է ծանր հիւանդ լինել,  
մուր սենեակի մէջ, մէն-մինակ, ամրող զի-  
շերներ լուսացնել, անկողմում շուռ-մուռ զալ-  
լուր տանջւել... արտասուել... ու մահուան  
սպասել...

Ո՞ւր ես դո՛ւ, մահինս մօս ծունկի եկած,  
ինձ հետ՝ ինձնից աւելի տանջող մայր իմ:

Ինչո՞ւ չեմ լսում բն սրտառուչ եւ խրա-  
խուսիչ խօսքերը, որից մահը կը խուսափէր եւ  
ցաւերս կը բերեւային...

Սենեակս մուր է եւ ցուրտ... Ես պապակ-  
տում եմ ծարաւից... ինչո՞ւ չի վառում լսմ-  
պը, եւ չի նարհասում վառարանը, բաժակս չի  
լեցում զրով.

Զէ՞ որ ես հիւանդ եմ...

Մայր, դու ինձ մօս չես, ես միշտ էլ պի-  
տի մետմ ծարաւ, սենեակս՝ մուր եւ ցուրտ...

Մահուան սոսուերը տարածւել է արդէն  
սնարիս վրայ...

Մայր իմ, ես սարսափում եմ մինակ, եւ  
չեմ ուզում տանջւել երկար...

Ե՛կ, շուտ եկ, ես պիտի մեռնիմ, ե՛կ, որ  
մահը ինձ չտանջէ երկար...

Զէ՞ որ բն ներկայութեամբը բերեւանում  
է տագմասը եւ մահը դառնում է հանգիստ...

Երբ ես կուզամ գերեզմանդ՝ ֆեղ այցի,  
կը լեցուի սիրտս յոյզերու յօրդ տարափով,  
ինչպէս երեմն ես կը նետուէի քու գիրկը...:

Ծաղիկմերը, որ խնամքով մը գերեզմանդ  
կը սաւանեն, իրենց բոյրին հետ, քու հռտովը  
սիրտս ու հոգիս կը պարուրեն...

Գերեզմանիդ վրայ գիշեր-ցորեկ կախ-հո-  
վանի ուռիները, խոր փափութներով, անմեռ  
սիրոյդ մրմունջները հողին տակէն ինձ կը քե-  
րեն...

Զեռներդ, մեղմ զեփիւռով, վարսերուս  
հետ խաղալով՝ արցունեներս կը սրբեն...

Եւ դու հօվով, ծաղիկներով, մրմունջնե-  
րով կեանք կ'առնես, կը փափսաս, ինձ կը  
զգուիս եւ կը սիրես... երբ ես կուզամ գերեզ-  
մանդ՝ ֆեղ այցի...:

Ես նատել էի գիւղամիջի մեծ պարտիզում,  
մէն-մինակ, աւազանից ժիշ հեռու, պատի տակ,  
ծեր ու ծուած ուռիմերի շարժերում, հողէ  
քումբի վրայ:

Քամին սուլում էր, աւազանն երգում, իսկ  
ուռիները ողջերք փսփսում մենող արեւի վեր-  
ջին շողերին:

Փակւել էին աչքերս անոյշ ձայներից:

Ես ննջում էի մոռացուրեան մէջ գիւղի  
պարտիզում, ծառերի տուկին, աւազանի մօտ...

\*\*\*

Քո ձայնը յանկարծ զարքեցրեց ինձ:

Աչքերս բացի...

Ընկերուակիներդ քեւերդ գձած՝ դու գալիս  
էիր դէպի աւազան:

Զ'բարեւեցիր ինձ, աչքերդ միայն մի հարց  
ուղղեցին,

— ինչո՞ւ ես եկել դու առանց ինձ...

Իսկ իմ աչքերը, խիստ ու բռնակալ, ուրիշ  
բան հարցոլին,

— Ովքն՞ը են դրամի...

Կարմրեցիր իսկոյն . կռպերդ կախեցիր .  
զաղւած հառաչանքդ մի բան հեծեծաց ,

— Գիտե՞ս , որ միայն ես քեզ եմ սիրում . . . :

Ընկերուիներդ ցրւեցին ենոու՝ ծաղիկ  
փնջելու , իսկ դու գամեցիր ինձնից ֆիշ հեռու ,  
թիկն տւած ծառին , աչքերդ զրերին . . .

Ես չեի խօսում . զիտե՞մ , դրա համար դո՞ւ  
էլ չեիր համարձակում խօսել :

Գտակդ էիր նմլում անդադար . ձեռներդ  
դողում էին : Երբեմն միայն նայում էիր դեպի  
ինձ , էթ էլ ոտքիս ծայրերին . . .

Ես նայում էի քեզ երկա՛ր ու լուր . . .

Կանացի անսիրու պահանջն է տեսնել կախ  
գճած աչքեր , խոնարհած զլուխ եւ չ'կշտանալ :

Քամին սուլում , աւագանն երգում , իսկ ու-  
նիները օրօրում էին , փսփսում անվերջ . . .

Ըստ երեւոյթին մենք մոռացել էինք ի-  
րար . . .

Բայց մեր մտքերը իրար հետ զրկւած , օ-  
րօրուում էին մեր զլուխ վերեւ , ուորիների այս  
փսփսում անվերջ . . .

Ընկերուիներդ նշան տւին քեզ :

Գնում էին տուն :

Դու նայեցիր ինձ երկա՛ր . ապա շրբներդ  
դողուղացին ,

— Խանգարո՞ւմ եմ քեզ . . .

Բերանդ ստում էր . աչքերդ խնդրում էին ,  
որ մնաս ինձ մօտ :

Ստախօսութիւնդ պատժելու համար , ես մի  
անսիրտ բառ առեցի ,

— Գնա՞ . . .

Երկար չեի կարող խօսել , ձայնս կը մատ-  
նէր ինձ . . .

Զէ՞ որ սրտանց ուզում էի , որ մնաս , մի-  
տյն թէ ուժով . . .

Մէկ էլ նայեցիր , թէպէս սիրտս դողում էր  
այդ նայւածքներից , բայց նորից քո՞ աչքերը  
նահանջեցին :

Գտակդ նորից նմլեցիր , շրբունքներդ հուա  
տւիր եւ մեքենայարար սուազ զնացիր :

Եկել ես մեզ մօտ եւ իմա համար երկու  
փունջ ծաղիկներ ես բերել:

Քո ձեռներով դրել ես նրանց էն ծաղկա-  
մանների մէջ, որոնց ես միշտ դնում եմ իմ գը-  
րասեղանի վրայ:

Գիտես, որ ես ծաղիկներ շատ եմ սիրում.  
Դրա համար բերել ես անձամբ, բայց այնպէս  
ժամանակ, երբ հաստատ իմացել ես, որ ես  
տանը չեմ լինելու...

Հառկանում եմ ֆեզ!

Դու խանդում ես մինչեւ անգամ ծաղիկնե-  
րին, որոնց ես սիրում եմ...

Սրա համար է, որ դու չես եկել էն ժամա-  
նակ, երբ ես, անփոյք բարեւիդ — ֆեզ տան-  
ջելու համար — պիտի խլէի քո բերած փուն-  
ջերը, ու փոխանակ ֆեզ՝ պիտի գգւէի, հոտո-  
տէի եւ համբուրէի նրանց...

Գիտեմ չուզելով էիր գնում, եւ անիծում  
էիր հպարտութիւնս...

Ես էլ անիծում էի վախկնտութիւնդ...

Ինչո՞ւ գնացիր...

Էլ յետ չնայեցիր, բայց ես նայեցի՝ մինչեւ  
ժառերը ժածկեցին ֆեզ:

Ինչե՞ր չէի տայ, երէ վերադառնայիր եւ  
ուժով մնայիր իմա մօտ...

\*\*\*

Ես նսոնել էի գիւղամիջի մեծ պարտիզում,  
մէն-մինակ, աւազանից ֆիշ հեռու, պատի տակ,  
ծեր ու ծուած ուրիների շարքերում, հօղէ  
բումրի վրայ...

Լուսինը եկել էր ու խաղ էր անում ժառերի  
վրայ...

Քամին սուլում, աւազանն երգում, իսկ ու-  
ռիները օրօրուում էին իմ գլխի վերեւ, փսփում  
անվերջ...

Փշրւած սրտով, տարտամ բայլերով շարժ-  
ւեցի դէպ' տուն...

Գիտէի որ էլ յետ չէիր գալու....:

Ես կանգնում եմ մեր բակում, կռնակս քեզ  
տւած պատին, փողոցի դռան ետևում:

Լուսինը, քաղցր աչերով, նայում է ինձ,  
եւ մեր փողոցով անցնող գետակը երգում ինձ  
համար...

Ես սիրում եմ գետակի ձայնը, նրա գիւ-  
րական ելեւշների մէջ մի կախարդական բան  
կայ, որ երբեմն գալիս՝ խառնում է իմ սրտի  
գարկերին, — նրա բայլերի ձայնն է այդ...

\*\*\*

Նա գալիս է առանց աղմուկի, ու մասմե-  
րով կամացուկ խփում է դռան...

Բացում եմ դռուը:

Նայում եմ նրան, նա՝ ինձ, երկա՛ր ու  
լուռ...

Հառաջում է նա, հառաջում եմ եւ ես...

Դուրս եմ գալիս փողոց:

Մենք գնում ենք կողք-կողքի գետակն ի  
վեր:

Ոչ ոք մեզ չէ խանգարում:

Լուսինն իր քաղցր նայւածքով նայում է  
մեզ, եւ վազող գետակը երգում մեզ համար:

Եւ մինչեւ անգամ հիմա, երբ դու մտու-  
ծում ես, որ ես այժմ նստած եմ զրասեղանի  
մօս, գլուխ դրած քո թերած փնջերի մէջ,  
զգուում եմ նրանց, ու անկոււտ մինչեւ քոֆերիս  
վերջին ժայրը ծծում նրանց հոտը, զիտե՛մ,  
քեպէտ չես տեսնում, բայց տանջուում ես, բար-  
կանում, լաց լինում, անգամ ափսոսում, որ  
թերիք նրանց...

Դու մոռանում ես, որ դու էլ ես ծաղիկ.  
Ես քեզ ամէն ծաղիկներից շատ եմ սիրում...

Բայց... չեմ զգուում, չեմ հոտոտում, ո՞չ  
էլ համբուրում...

Վախենում եմ, որ դու էլ քառամիս ինչ-  
պէս քո թերած ծաղկեփնջերն են քառամում,  
իմ տաք շնչիս մէջ, զգւանիներիս տակ...

\* \* \*

Երբ մենք հասնում ենք կամքին, նա ընկ-  
նում է կամուրջի երկար պատի վրայ, աչքերը  
գետի հոսանքին. իսկ ես կանգնում եմ նրա կող-  
ին եւ նայում նրան...

Մենք չենք խօսում...

Ներքին յուզումից փայտանում է իմ լե-  
զուն:

Աշխատում եմ բառեր նարել, մի բան ա-  
սել, բայց խօսել չիմացող երեխաների նման՝  
մնում եմ պապանձած:

Նա շարունակում է նայել ցած, ես՝ նրան,  
լուսինն էլ մեզ...

Երբ վերադառնում ենք դեպի տուն, դրան  
մօտ մի բռպէ կանգ ենք առնում. հառաչում է  
նա, հառաչում եմ եւ ես:

Նայում է մէկ ինձ, անկուշտ ու երկար,  
մէկ էլ էն նամքին, որտեղից տուն պիտի զնայ:

Դրանով ասում է, որ ներս գնամ:

\* \* \*

Լոիկ մտնում եմ ներս, եւ առանց բարձ-  
րաձայն հրաժեշտի, վերջին անգամ հառաչում  
ենք...

Ես կամացուկ փակում եմ դուռը:

Նա, դրան մօտ կանգնած, սպասում է իմ  
ես էլ նրա' հեռանալուն:

Ոտներս նախ ուժեղ, ապա դանդաղ, խը-  
փում եմ գետնին, ուզում եմ խարել նրան...

Խարում է նա...

Բարձր հառաչում եւ նոյն համաշափ քայ-  
լերով հեռանում է:

Նրա քայլերի ճայնը նմլում է սիրտս...

Ես մնում եմ կանգնած մեր բակում, կըռ-  
նակս թեք տուած պատին, փողոցի դրան ետե-  
սում...

Լուսինը նայում է ինձ ցուրտ նայրածքով,  
եւ գետակի լացող ելեւէջների մէջ իմ հոգին,  
նգնում է լսել էն ճայնը, որ մօտենալիս յու-  
զում, իսկ հեռանալիս նմլում իմ սիրտը...

Դու խոստացել ես՝ պիտի գաս :

Յացածրել եմ վարագոյքներն իմ պատուհանիս եւ կպած մի փոքրիկ նեղքի, սրտատրափ նայում եմ էն նանապարհին, որտեղից դու պիտի գաս :

Վարագոյքների յետելից եմ նայում, որպէսզի դու չտեսնես իմ սպասումս. վախենում եմ խղճաս ինձ :

Պատուհանիս վարագոյքների ետեւը քափանցելու անլարող են քո նայւածքները, զուր են փնտռում ինձ...

Քեզ սպասող չկայ...

Սպասուիին հրաւիրում է քեզ փոքրիկ դահլիճը, ասելով, որ ես շուտով կգամ :

Բայց ես շուտով չեմ գալիս.

Ուզում եմ սպասես ինձ...

Սրա համար քանդում եմ մազերս եւ նորից սանտրում :

Վախենում եմ պարապ կանգնել. կարող եմ չհամբերել, ներս մտնել, առանց քեզ երկար սպասել տալու...

Աթիամբերութիւնը եռում է դէմքիդ վրայ. առամբներդ սղմում ես, ոսքիդ ծայրով խվում յատակին.

Փականքի ծակիցն եմ տեսնում...

Մի բանով ամուր խում եմ դրան, իբր քէ գալիս եմ: Դիմաւորելու պատրաստ՝ կանգնում ես, աչքերդ փայլում և ժպիտը պարում է կարմըրող դէմքիդ վրայ...

Բայց ես է՛լի չեմ գալիս.

Ուզում եմ կաշւիցդ դուրս եկած սպասես:

Դա հանոյք է պատճառում ինձ...

— Ես այնքան զբագւած էի, անգամ մոռացել էի, որ դու գալու էիր ինձ մօտ, ասսցի ես:

Դու շփոթեցիր, քրտնեցիր, գղջացիր անգամ, որ եկել էիր...

Առանց երկար սպասումի՛ ուզեցիր գնալ:

Թէպէտ սարսափելի էր այդ ինձ համար, քայց համաձայնեցի:

Հարւածս մեղմելու համար էր, որ վերցրի մի ծաղիկ եւ իմ ձեռներով ուզեցի հաստատել քն կրծքին:

Երբ ձեռներս կպան քն բանկոնիդ, ես սարսրացի հետանի մի բաղցը հոսանք ցնցեց ինձ եւ տարածւեց երակներիս մէջ...

Քիչ էր մնում որ նետուի քն գիրկը եւ լաց լինելով խնդրէի, որ մնայիր երկա՞ր... շա՞տ երկար...

Քայց զսպեցի ինձ. անսրտութեամբ թռղի, որ գնաս, չխնայելով մինչեւ անգամ ինձ...

Ես ասում եմ լուսաբացը...

Ասում եմ արշալոյսի զռվիկ սիւֆերը, որ անգրաբար քշում, փախցնում են անբափանց խաւարը գիշերւայ:

Ամէն անգամ, երբ լուսաբացի աքաղաղներն են կանչում ու ագռաւները կռնչում, իմ սիրոս կտոր-կտոր ծւատում է. քափող աստղերի, փախչող գիշերի հետ, անծանօթ ուժից քշում է, տարւում...

Գիտե՛մ դէպի ուր...

\* \* \*

Ասում եմ բացւող արշալոյսը, որ խլեց նրան իմ գրկից...

Նա գիշերի պէս հաւաքնց փէշերը, գնաց հեռու, շա՞տ հեռու, ուր գիշերն էր զնում:

Երէ չգար լուսաբացը, չը փախչէր խաւարը, նա կը մնար ինձ մօտ, անգամ երէ յափտենականութեան չափ երկար լինէր գիշերը:

Սրա համար է, որ բացւող արշալոյսի դիմաց ես փակում եմ փեղկերն իմ պատուհանի, եւ փարաբում նրանց թանձր վարագոյրներով. որպէս զի... որպէս զի ապրիմ մի մասն էն գիշերւայ, երբ մենք իրար գիրկ նետուած, խաւարի ծածկող սաւանի ներքեւ, ամէն աչքից հեռու, նէլեաբային գիշերն էինք լուսացնում...

Ել ի՞նչպէս չառեմ լուսաբացը, եւ նրան ողջունող բոլոր ճայները...

Թո՞ղ մի քանի բռպէ աշխարհի այդ երեսը,  
եւ արի՛ ինձ հետ :

Արի՛, ես ֆեզ տանիմ այն տունը, կեանքի  
այն անկինը, ուր երբեմն գլուխ ես դրել մի  
բարախող բարձի վրայ, եւ մոռացել աշ-  
խարհը ...

Այժմ գիշեր է մեզ մօտ, կէս գիշեր . . .

Լոել են մեր նուտիկները նլւացող . լուս-  
թիւնն է իշխում ամէն տեղ : Շնիկս է միայն  
արքուն : Նա միւս կծկուած դրանս ետեռում,  
հսկում է սենեակիս ...

Գիշեր է մեզ մօտ այժմ, կէս գիշեր :

Սլսլացող ժամիների հետ լուսնակն է պա-  
րում մեր քաղաքի վրայ . . .

\* \* \*

Ի՞նչ աղմուկ եւ իրարանցում է այդ քն  
քաղաքում :

Մարդկային այդ ովկիանի մէջ, օրւայ այս  
ժամին, զիտե՛մ, յոգնած կը լինիս, ու ֆեզ  
հանգիստ է պէտք :

Արի՛, ես ֆեզ տանիմ այն տունը, ուր ֆեզ  
համար եւ ՄիՄիԱՅՆ ՔԵԶ ՀԱՄԱՐ, միշտ  
պատրաստ մի օրօրան կայ, օրօրո՞ն . . . ժնա-  
ցընո՞ն . . . մոռացնո՞ն . . .

Ոտքիդ մատների վրայ ժայլի՛ր, քող մարդ  
չլսէ՛, լուսնակի շւաքով ե՛կ, քող մարդ չտես-  
նէ՛: Դուռս բաց է, նե՛րս մտիր, կը բռնեմ շուն-  
չըս որ չաղմնէ . . .

Փոել եմ թեւերս, դիր գլուխդ կրծքիս,  
խմենք, հարքենք հին զինիովն մեր անցեալի-  
սպա ննջենք իմ քաղաքի գիշերի մէջ օրօրող . . .

Շ Ն Ի Կ Ի Ա

Երբ ես քեզ գնեցի էմ տղայից, որը քա ծըն-  
ւելուց յետոյ քեզ մայր, ընկեր էր եղել, գու  
վշտագին կաղկանձում էիր...

Փոքրիկ ատամներովդ սպառնում, եւ, քէ-  
պէտ քաղցած, բայց մերժում էիր իմ տուած  
կարկանդակն ու հացը:

Տիրոջդ հրամանով լոեցիր եւ դողդղառով  
տեղաւորեցիր իմ թեւերի մէջ, կրծքիս վրայ:

Գիտե՞մ, լոիկ լաց էիր լինում, աչքերիցդ  
ջուր էր գալիս, եւ դողում էիր:

Մեր մանկիկները ցնծութեամբ ողջունե-  
ցին քեզ, բայց դու, արհամարհելով նրանց շա-  
ֆարն ու հացը, ամրող գիշերը քաղցած, լուռ  
ու համբ, հոտոսում էիր շուրջդ, եւ լաց լի-  
նում օտարութեանդ համար:

\* \* \*

Շատ չանցած, մոռացար եին տէրդ ու  
տունդ:

Ես եմ քո ընկերդ այժմ, եւ գրու մայրդ:  
Ել չես դողում ինձնից...

Փոքրիկ ակռաներդ սպառնալու համար չէ,  
որ երեւում են ինձ, այլ պաշտպանելու ինձ այն  
բարեկամներից, որոնց դու աւելի լաւ ես նա-  
նչուում, քան' ես...

Ամէն անգամ, երբ մի բարեկամ է մտնում  
տունս, դու չանսալով անգամ իմ յանդիմանու-  
թիւններին, հաշում ես, կաղկանձում ես, ըս-  
պառնում ակռաներովդ...

Գիտե՞մ, դրանով դու ուզում ես հաւատա-  
ցընել, որ նրանցից եւ ո՛չ մէկն ումի քա ԱնկեՊ-  
ԾՈՒԹԻՒՆՆ ու ՀԱՀԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ դէպ ի  
ինձ...

Փիսիկ, դու մտար խոհանոցս, եւ կերար  
խորտիկներիցս մի կտոր :

Սրա համար ես վերցրի մի ուրիշ կտոր եւ  
փաղաքշանեցվ մօտեցայ ֆեզ :

Բոնեցիր :

Կատաղի ուժգնութեամբ ֆեզ լսկեցի սա-  
լայատակին, բակում . էլ չը բարձրացար...

Դեռ բերնիցդ չէր եկել կերածդ, դրա հա-  
մար մօտեցայ ֆեզ :

Խոխոռում էիր հազիւ լսելի մրմոռով, եւ  
ամրող մարմինդ զալարում էր :

Նստեցի կողքիդ :

Զօգնեցի ֆեզ, բայց եւ վերջին հարւածն էլ  
չտուի ի հարկէ :

Միքէ՞ այդպէս լաւ չէր, որ գալարում  
էիր ու արիւն փսխում...

Հոգեւարքի խոխոռոցը խեղդում էր կոկոր-  
դրդ, եւ դու զալարելով՝ համարեա մի շրջան  
արիր փուած տեղիդ վրայ, ոտներդ պարզելով  
ու կծկելով :

Աչժերդ բացւեցին :

Դու նայեցիր ինձ. էն ապակեայ նայւածք-  
ներդ չէին սակայն, որով երբեմն նայել էիր  
ինձ :

Զարմանիքի, բողոքի եւ աղերսանիքի մի հըս-  
կայ կոչ կար այնուեղ :

Ի զո՞ւր...

Մի ժանի բռպէ եւս... և սատկեցիր, չհաս-  
կանալով սակայն, որ ֆեզ սպամոզը ես չէի,  
այլ ՄԱՐԴԸ, որ իր խորտիկների իւրաքանչիւր  
կտորի համար կ'սպասնէ այնպէս՝ ինչպէս ես  
սպասնեցի ֆեզ :

Խեղն փխսիկս...

Դու գնում էիր հեռո՞ւ, շա՞տ հեռու, պան-  
տըխտութեան:

Վերջին անգամ հաւաքւել էիմ ռուրջդ:

Երբ կանգնեցիր վերջին խօսք ասելու,  
դեղնութիւն փուլց երեսիդ...

Երկու ձեռքով պինդ բռնած արոռը, եր-  
կա՞ր ու լուռ, նայում էիր ցած:

Կիցկուուր ձայնիդ հետ բարձրացրիր աչ-  
քերդ:

Զգիտեմ ինչո՞ւ, նախ նայեցիր ինձ, ապա  
միւսներին...

Սիրու դողաց... ըրբներս էի կրծոտում:

Առաջին անգամն էր, որ քո հեռանալու  
միտքն այդպէս ուժեղ կերպով ննշում էր ինձ...

\* \* \*

Խօսք ուղղւած էր ընդհանուրին, բայց  
դրանց ետեւում՝ միայն ինձ...

Սիրու չարիր խոստովանել այդ, գիտեմ,  
երէ հարցնէի՝ պիտի ստէիր, անգամ մեկնե-  
լուր պահին...

Չմատնելու համար էր, որ առաջին նայ-  
ւացքիցդ յետոյ, էլ չը նայեցիր ինձ, բայց եւ  
ո՛չ մէկին...

Ահա թէ ինչո՞ւ ես անտարբերութեամբ  
ժպտում էի, բայց արցունիս կուլ տալու համար  
շրբունքներս էի կրծոտում...

Դէն շպրտի'ր դիմակդ, գէք այս վերջին օ-  
րը բող աչքերովս տեսնեմ ֆեզ, ու երշամկու-  
թեանը մէջ...

Հերիք մաքախս զգացմունքներիդ դէմ:

Զէ՞ որ 'ի վերջոյ պիտի յոզնիս ու յաղ-  
քըւիս...

Ուրեմն ինչո՞ւ վաղը, եւ ոչ այսօր:

Զէ՞ որ վերջին օրն է այսօր, դու կը մեկ-  
նիս վաղը...

Ինչո՞ւ ես եկել, քանի որ որոշել ես չխօ-  
սել, ու ձեռքդ պինդ խցել ես սրտիդ բերնին,  
որ չը մատնե՞ս:

Կարծում ես չե՞մ զգում:

Յօրանջում ես երկար ու շուտ-շուտ, որ-  
պէս թէ աչքերդ նրանից են քացւում...

Ինչո՞ւ ես դիմակաւրել, մի՞քէ Բարե-  
կենդան է:

Երէ այդպէս է՝ Մեծ Պահէի պէս երկար ու  
ծանր ՎԱՂԸ յիշիր, որ էլ չպիտի տեսնենք ի-  
րար...

Դէն շպրտի'ր դիմակդ, եւ խցանը ժաշիր  
սրտիցդ, ասա՛, երգի՛ր ու պարի՛ր, եւ բող  
մենք անդիմակ Բարեկենդանն ապրինք, գէք  
այս վերջին օրւայ վերջին ժամում...

Զէ՞ որ վերջին օրն է, եւ վաղը պիտի մեկ-  
նիս դու...

Մի՛ կապկպիր :

Զգիր պարանը ձեռքիցդ, եւ թող իրերդ  
մնան այդպէս խառնիխուռն տախտակամածի  
վրայ :

Դեռ մի ժանի ժամ էլ ունենք :

Եկ, մօսս նստիր, մի ժանի ժամ մոռա-  
նանք սրտերը նմլող հեռացումի վիշտը եւ ժաղ-  
ցը, անուշ զբոյց անենք...

Զէ՞ որ դեռ մի ժանի ժամ էլ ունենք...

Նստիր կողքիս, թող սրբեմ արցումբները  
աչքերիցդ... ժպտա՛ ինձ, եթէ չես ուզում, որ  
խեղդւեմ վշտիդ մէջ...

Փակի՛ր աչքերդ, որ չը տեսնես պարանը եւ  
ճանապարհի իրերդ, որ ցրւել ես տախտակա-  
մածի վրայ :

Գիրկս նետւիր, եւ մոռացիր ամէ՛նը... ա-  
մէ՛նը...

Զէ՞ որ դեռ մի ժանի ժամ էլ իրար մօս պի-  
տի լինենք...

Ինձ ինչ, Երկնակամարի վրայ լուսոյ արեւն է  
փայլում: Քո աչքերը չեն նայում ինձ,  
սիրոս թանձը խաւար է, սեւ ու ան-  
թափանց...

Ինձ ինչ, Մայիսն է իշխում մեր լեռներում ու  
դաշտերում, իր տաք շնչովն կեն-  
դանի...

Դու փախար ինձնից սիրոս դատարկ  
ու ամայի, դողում է ցուրտ ու ան-  
կենդան ժամիների տակ...

Ինձ ինչ, Աշխարհն ուրախանում է, պարում,  
սիրոյ գիմիից հարքած.

Դու փշրեցիր անգրօրէն քածակս,  
երբ խմելու համար որբներիս էի մօ-  
տեցնում...

Այս ի՞նչ իրարանցում է ...

Ի՞նչ են այս ձեռքի սղմումները, գրկախառնումներն ու համբոյրները ...

Այս, ես մոռացել եի, որ սա կայարանն է. որ այստեղ բաժանում են սիրածները իրարից ...

Յենած ինչ որ բանի, ես կանգնել եմ հեռում եւ չգիտեմ ինչո՞ւ ...

Միքէ ես էլ բաժանում եմ մէկից. ապա ինչո՞ւ լաց չեմ լինում ...

Ե՞հ, քող նրանք լաց լինեն, ովքեր չեն ուզում վիւտը պահել ընդերկար ...

Խակ ես կը զափեմ արցունքներս, եւ չեմ քողի վիշտս դուրս բափի սրտիցս ...

Զէ՞ որ բաժանումից յետոյ ա՛յդ է մնում ինձ համար նիրական ...

Ես յանախ ապտակում եմ ֆեզ, որ դու լաց լինես ...

Երբ արտասույքը փայլում է աչքերումդ, այսերդ բոսրում ներքին յուզումից, յիշում եմ Մայիսի ցողաքարախ վարդը պարտիզիս, երբ ծունք իջած, բուփի առաջ, ծծում էի օքր-բունքներով կարիլները նրանից ...

Ահա թէ ինչո՞ւ յանախ ապտակում եմ ֆեզ, որ արտասույք փայլէ աչքերումդ :

Եւ սրա համար դու ինձ անխի՞ղն ես ասում ...

Անզուսազ կարիլները ծածկելու համար, երբ զլուխոյ բաղում ես բարձերի մէջ եւ երկար, շա՞տ երկար դէմքդ պահում ես ինձնից, ես գղջում եմ կուրտուքեանս համար ...

Եւ մօտենում եմ ֆեզ, ինչպէս պարտէզիս վարդին ...

Աղաչանքիս առաջին խակ խօսքը դուրս է բափում հեկեկանքդ, որ խեղդում էր կոկորդդ եւ արգելում քո շունչը ...

Ես նստում եմ կողքիդ, խլում զլուխդ, սեղմում կրծքիս. կտրում է հեկեկանքդ, եւ երկար, շա՞տ երկար դու մնում ես իմ կըրծքին ...

Ես գղջումս եմ փսխում ֆեզ ...

Բայց չեմ ասի, թէ ինչո՞ւ յանախ ապտակում եմ ֆեզ, որ դու լաց լինես ... :

Գարնանային եղանակի վերջին սուզն էր,  
Երբ դու գնացիր...

Ամպերը յամառ՝ վրանել էին մեր երկինքը,  
Եւ մամուլ մամուլ մաղտսմ մեր պարտի-  
զում դողացող ծառերի գլխին:

Իմ սրտի մէջն էլ շաղտում էր, մաղտում,  
Բախիծը անվերջ. կարօտիս թափով յիշողու-  
թիմս հւում դէպի ժեզ, բռնում չարս բռլորդ,  
հեռո՞ւ, շա՞տ հեռու...

Սեւ-գորշ ամպերի անձրեւին նման, կա-  
րում էր արցումք, իմ աչքերից վար, —

Երբ դու գնացիր...  
.

իսկ երբ ոք դու զաս...  
Արեւ ու անձրեւ... Ահա Միածա՞ն...

Վարդավառի Մեռելոցն է այսօր...  
Գերեզմանդ եմ եկած...

Վշտիս խունկերն ու օրհներգներ, բեկ-բեկ  
յոյսերս ու երազներս չորցած, ես ժեզ վրայ կը  
ծխեմ:

Վարդավառի Մեռելոցն է այսօր...  
Կոկիծներուս փսխութներ, արցունքնե-  
րուս հետ մէկսեղ, —ծաղկեփունչս զունարափ  
ու բօշած, — կրծքիդ վրայ կը փոխեմ:

Վարդավառի Մեռելոցն է այսօր...  
Հողաքմբիդ կողքն ի վեր, յուշարձանիդ  
դէմ ու դէմ, ծունկի եկած, սրտիս խունկերն  
ու օրհներգներ, բեկ-բեկ յոյսերս ու երազներս  
չորցած, կրծքիդ վրայ կը ծխեմ...

Վարդավառի Մեռելոցն է այսօր...  
.

Երեկոյ է, գիւղի՝ երեկոն :

Սարերը բռնկւել են մուր-նարնջի հրդե-  
հռվ, և ամպերը, ծւեն-ծւեն, խաճառում են  
խարոյկի զլխին...

Նօսր, շատ նօսր մանուշակի ծուխը երր-  
դեհի —մշուշը— վերեւից ցած է մաղում սա-  
ռերի փէշերին, դաշտերի վրայ :

Տափաստանը շպարտում է հեռո՛ւ, շա՞տ  
հեռու...

Երեկոյ է :

Հանգում է հրդեհը սարերի :

Ճանապարհի զլխին ամենօրեայ փոշին է  
քարձրանում ու յամրաքայլ տուազ գալիս :

— Գիւղի նախիրն է :

Դաշտերի կեանքը դառնում է դէպի գիւղ :

Կոտրած կոչնակի ձայնը, բառաչումների և  
մայիսների հետ խառնուած, դլսդիսկում է  
դռների առաջ :

Բլուրից բլուր մի երգ է արձագանգում,  
ուրախ ու բրգուտ...

Հնձւորուիիներն են գալիս, փայլուն ման-  
գաղները ուսած — Գիւղի աղջիկները զահել,  
շոգուն աշեիրով, այրած դէմքով, հրդեհող  
սիրով...

Լուսնակն է գալիս, կլոր, ժպտուն լուս-  
նակը եւ կանգ է տանում գիւղի մէջտեղում:

Ոչխարաբակից հովիւն է կանչում իր հին  
սրինգով, բաղցը ու օրօրող...

Կալերի միջին, դէզերի տակին, լուսնոյ  
շւաքում, ոանչքարներն պանկած, հանգիստ  
ժուն ժաշում, ինչպէս գիւղի տափաստանն աղ-  
ջամդջի մէջ, գիշերւայ զրկում...

## Նուեր՝ ՇԱՄԻԿԻՍ

Միամեակդ է այսօր...

Ծաղիկներով ժպտում, գլարք, ծեր ու զահէլ, մանուկ, միջակ, շուրջդ ենք բռնել:

Միամեակդ է այսօր...

Ծիծաղում ենք ու լաց լինում, երգում, պարում, բարեմաղթում...

Միամեակդ է այսօր...

Շուրջդ բոլոր վիշտ ու ծիծաղ, լաց ու խընդուք, տանջանք, հանգիստ գրկախառնւած՝ պար են բռնել...

Միամեակդ է այսօր...

Խակ դու, մանկիկ, մի բան ունիս 'ի սրտասխան այս բալորին,  
— Մի անգիտակ ժպիտ միայն...

Այս, քէ միայն դու պահէիր քո ժպիտը միշտ անգիտակ, այսօր եւ վա'դ, մինչեւ վախնան, դէպի ամէն... դէպի ամէն...

Դէպի աշխարհ...

Դուրս վռնտեցիր սրբարանէդ դու ինձի, եւ ոտքերուդ տակ, վայրագօրէն, կախկոտեցիր գոհերս, խունկերս եւ արցունիքներս, որ բերած էի ֆեզի...

Դուռդ փակեցիր երեսիս, խուլ մնալով աղաշանքներուս եւ երկրպագումներուս...

Երբ իմացար, որ ես ծունկի եկած յամառէն ու սրտանց, ֆեզ կը պաշտեմ ու կ'աղօքեմ՝ սրբարանէդ դուրս փակող դրանդ առաջին... կատաղեցա՛ր, ստիպեցիր հեռանա՛լ...

Այժմ, իմ խրնիքում, մէն-մինակ, ծունկի եկած, քու աչքերէն ես հեռու, բայց ֆե՛զ համար, եւ յաւիտեան ՔԵ՛Զ ՀԱՄԱՐ, պիտի ծխամ ու գոհւիմ, պիտի պաշտեմ եւ սիրեմ ես, միայն ֆե՛զ... ՄԻԱՅՑ ՔԵ՛Զ...

Ի՞նչ փոյք, որ դու զիս մերժեր ես...

Մի՛ նայիր ինձ այդպէս շեշտակի եւ երկար...

Սիրոս կը քրբռայ, եւ ծունկերս կը դողան այդ նայտածքներիցդ...

Աչքերս կը խրտչին արեւներիցդ. տապից քռալացող ծաղկի պէս զլուխս կ'ընկնի ուսիս:

Մի անծանօթ, քայց քաղցր զգացմունք կը լեցնէ, կ'ուլեցնէ սիրոս եւ կ'ալեկոծէ ինձ...

Ու քանի որ եռե՛ք, երբեք չես զգայ այդ, ու չես պարզի քեւերդ քոնելու ինձ, երբ ծունկերս կը դողան, եւ փոխանակ ուսիս՝ քո կուրծքը դէմ չի՛ գայ իմ ծուռղ գլխին, եւ շրբներդ քարացած՝ խաղաղութիւն չեն մըրմընջայ իմ ալեկոծող սրտին... Ուրեմն, մի՛ նայիր ինձ այդպէս շեշտակի եւ երկար...

Ինչո՞ւ լուսացաւ այսօր այսպէս տարօրինակ: Կարծես օրերի սովորական բւին չի պատկանում այս օրը...

Եւ ի՞նչ սրտագին հառաչանք էր որ դուրս եկաւ ինձից ու տարտղնեց օդում...

Ես էլ չգիտեմ:

Մի՞քէ օրուան տարօրինակութիւնն է քարացրել ուդեղս, լարել՝ ջիղերս, կտրառում՝ սիրոս, եւ գալարում՝ աղիքներս...

Ինչո՞ւ եմ անում այն՝ որի հակառակն է քելադրում կամքս...

Այս ի՞նչ խանճաշփորտթիւն է տիրում իմ մէջ...

Ուներս ու ձեռներս գործում են կամքիս  
բուռն պահանջին հակառակ...

Ըմբռստացո՞ւմ... այս տարօրինակ օրւա՞յ  
մէջ:

Ո՞ւմ ուրեղովն են լարում եւ գործում այ-  
սօր իմ ոտներն ու ձեռները.

— Զգիտեմ...

Նոյնքան տարօրինակ է եւ իմ չզգիտնալը...

Սպանում է ինձ...

Ուզում եմ զնալ՝ նատում եմ...

Ուզում եմ սպասել՝ զնում եմ...

Ուզում եմ լաց լինել՝ ծիծառում եմ:

Ու այս բոլորը ինչպէ՞ս փախւց, եւ ին-  
չո՞ւ,

— Ես էլ չզգիտեմ...

Մեր տունը նստած է անտառի եզրին:

Երեկոները երբ նիրիում է Օգոստոսի ա-  
րեւը հրաշեկ, եւ կլոր լուսինը նստում անտա-  
ռի զլիխն՝ ես վազում եմ անտառը:

Ծառերը լուռ կանգնած իրենց տեղերը,  
ժայռում են ինձ. զեփիտի հետ կանաչի խոնա-  
օդն է փաքաքում իմ վրով եւ լեցում բռ-  
ֆերս:

Սպասում եմ մէկին...

Ահա՛ նա իր գառնուկին հետ:

Մենք նանաչում ենք իրար, եւ Մէկն էլ  
մեզ:

Ես լսում եմ զնզգնգոցը գանգակին, որը  
միակ զարդն է իր բռխլիկ գառնուկին:

Նա գալիս է պտոյտ տալու իր գառնուկին  
հետ անտառում:

Իրա համար է անտառը ժպտում եւ լուսի-  
նը ամէն օր գալիս այստեղ...

Նա զիտէ տեղի իմ անտառի մենութեան,  
ու շտապում ինձ մօտ... եւ գառնուկն էլ ու-  
ղագ վազ է տալիս նիշտ այնտեղ, ու նստում մեր  
ունեների մօտ:

Երբեմն ես քազ եմ կենում, որպէս զի  
փնտռեն ինձ, գառնուկը եւ ինքը...

Նա չի փնտռում ինձ երկար.

Հեզիկ կանգնում է էն ծառի տակին եւ ա-  
նուն շշնչում կամաց :

Ես դողում նրա ճայնից այնպէս՝ իմշպէս  
ծառերը երեկոյեան զեփիւրից, եւ ընկնում նրա  
գիրկը...

Երբ նա զնում է, նանապարհի ափերին  
սպասող ծառերի նիւդերը համբուրում են նը-  
րան. իսկ ես էլ, տուն զնալիս, էն նիւդերին՝  
որ կպել են նրան...

#### Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ	Տող	Այսալ	Պիտի ըլլայ
25	13	շունչս	շունս
38	4	մամուլ մամուլ	մալուլ-մալուլ
40	15	դաշտերի	դաշտերից
44	5	խրտչին	խտչին
47	19	տեղի	տեղը

(ՎԵՐԶ)



36269

36269

Գիւ 50 Սէնթ

9/22  
16